



## ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ

### ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ ժողովրդի մշակույթի բազմաթիվ արժեքներ վաղուց արդեն մուտք են գործել համաշխարհային արվեստի պատմության մեջ. միջնադարյան ճարտարապետությունը, մանրանկարչությունը, խաչքարերը, ինչպես նաև կիրառական արվեստի բազմաթիվ բնագավառներ: Հայ արվեստի բոլոր բնագավառների պատմական զարգացումը վկայող ընտիր օրինակների կարելի է ծանոթանալ հենց միայն Էջմիածնի տարածքում. IV դ. ստեղծված բազիլիկատիպ, իսկ մեկ դար անց կենտրոնագմբեթ խաչաձև հորինվածքի վերափոխված Մայր տաճարը, նրա մեծ ու փոքր գմբեթները (1627 թ.), Զանգակատունը (1654—1658 թթ.), տաճարին կից թանգարանը (1869 թ.), կենտրոնագմբեթ-խաչահիմ Ս. Հռիփսիմե եկեղեցին (618 թ.), որը ոչ միայն ազգային, այլև համաշխարհային ճարտարապետության գլուխգործոցներից է, գմբեթավոր բազիլիկ Ս. Գայանե եկեղեցին (630 թ.), Էջմիածնից ոչ հեռու գտնվող եռահարկ կենտրոնական գմբեթավոր Զվարթնոցը (641 թ.) և այլն:

Համաշխարհային արվեստի պատմության մեջ առանձնակի տեղ են գրավում խաչքարերը, որոնց ծագումը կապված է մենհիրների, վիշապ-կոթողների և այլ հուշարձանների հետ: Խաչքարերի նախափայերը փայտից էին, որոնք IV—VII դդ. փոխարինվեցին քարե կերտվածքներով: IX դ. սկսած խաչքարեր կանգնեցվել են Հայաստանի բոլոր գավառներում: Կանգնեցվել են որպես մեծագույն շինարարական աշխատանքների (եկեղեցի, աղբյուր,

կամուրջ), ավարտը հավերժացնող կոթող, որպես գերեզմանաքար, ինչպես նաև զանազան պատմական դեպքեր և ուզմական հաղթանակներ հավերժացնող հուշաքար: Խաչքարեր պատրաստող վարպետները տաղանդավոր արվեստագետներ էին, որոնք ոչ միայն տիրապետում էին քարի փորագրության արվեստին, ստեղծելով ժանյականման տարածքներ, այլև հմուտ քանդակագործներ էին, որոնք հասկանում էին քարի հարթության ձևավորման նշանակությունը, գիտեին այդ ձևավորման գաղափարա-տարածական կանոնները: Նրանք կարողանում էին թեմատիկ տեսարանները՝ «Խաչելություն» («Ամենափրկիչ» անվանված խաչքարերը), «Ամենակալը գահին», «Ավետում», «Մկրտություն», «Աստվածամայրը» և այլն, զուգակցել ոչ միայն կոմպոզիցիայի կենտրոնը կազմող խաչի պատկերման, այլև այն շրջապատող երկրաչափական ու բուսական զարդանախշերի հետ, որոնք բնորոշ են միայն ու միայն սովյալ խաչքարերին: Խաչքարերում առկա զարդաբանական տիեզերային անսահման շարժման պատրանքը, նրանց հյուսվածքների բազմազան տարբերակները քարե այս կոթողները բարձրացրել են մեծ արվեստի մակարդակի:

«Էջմիածնի վանքի տարածքում տեղադրված են տարբեր վայրերում և տարբեր ժամանակներում ստեղծված մի շարք խաչքարեր, որոնք ազգային բարձրարժեք արվեստի հոյակապ վկայություններն են: Դրանցից են Մաքենիսի երկարաձիգ, վերևում կլորավուն խաչքարը (IX դ.), հարթ

տարածքի վրա ծաղկած թևերով և հավերժության նշանների տարբերակներով, որոնք ոչ միայն քաղաքների պարզ մտածողության արտահայտությունն են, այլև խաչքարերի ձևավորման շրջանին պատկանելու առանձնահատկությունը: Հովհաննավանքից բերված Վարդան «կազմողի» խաչքարը (1171 թ.) գրավիչ է իր ինքնատիպ պատվանդանով, զարդանախշերի յուրօրինակ հյուսվածքով: «Ամենափրկիչ» խաչքարի ընտիր օրինակ է Վայոց Ձորի 1272 թ. կոթողը՝ խաչելության ընտիր կոմպոզիցիայով, որի ներքևում տեղավորված է որսի տեսարան (աշխարհիկ սյուժեի հետաքրքիր մեկնաբանում): Խաչքարը ուշագրավ է բարձրորակ զարդանախշերի շքեղությամբ: Իրենց հարուստ հարդարանքներով նշանակալից են Գեղարդից բերված երկու խաչքարերը (XIII դ.), ինչպես նաև Գրիգոր խաչքակյանի (1233 թ., Խմրզիկ), Աղջոց վանքի (1278 թ.), Արցախի (XIV դ.), շատ ավելի ուշ քանդակված Ջուղայի (1601—1602 թթ.) ժանդակահյուս խաչքարերը և այլն:

Մյուսն շարքում առանձնակի տեղ են գրավում միջնադարի տաղանդավոր մանրակարիչ, ճարտարապետ ու քանդակագործ Մովսիսի (XIII դ. վերջ—XIV դ. ըսկիզբ) կերտած խաչքարերը (1308 թ., Նորավանք), որոնք կատարողական վարպետության բարձր արտահայտություններ են:

Էջմիածնի վանքի հարստություններում հատուկ տեղ են գրավում մանրանկարներով հարուստ ձեռագրերը, գեղանկարչական աշխատանքները, հին դրամները և, ամենակարևորը, կիրառական արվեստի ստեղծագործությունները:

Կիրառական արվեստի գործերը՝ մետաղյա և գործվածքային իրերը, հիմնականում օգտագործվել են ըստ ծիսակրոնական նշանակության, հատուկ շուք և գեղեցկություն հաղորդելով տաճարին: Բնականաբար, դրանք հետագայում են թանգարանային արժեքներ դարձել:

Էջմիածնի նյութական հարստությունների մասին ուշագրավ տողեր են թողել պատմիչներն ու ճանապարհորդները:

Առաքել Դավրիժեցու վկայությամբ, 1603—1605 թթ., Էջմիածնի վանքը եղել է «կողոպտեալ ի զարդոց, ոչ գիրք, զի ոչ էր անդ ժամասել և կամ ընթերցումն, ոչ զգեստ և շուրջառ, զի ոչ էր ժամակարգութիւն և պատարագ, մինչ զի Բրիտանի իջման տեղն՝ և սուրբ սեղանն ևս ոչ ունէին ծածկոց, ոչ կանթեղք, զի ոչ գոյր լոյս... ոչ խնկարկութիւն, զի ոչ գոյր բուրվառ և խմնկ. և սպարկ յատակ եկեղեցւոյն քանդքանդեալ... մեծամեծ լուսամուտքն՝

գորս ունի, ամենն ի բաց կայր առանց վանդակի»: Ըստ պատմիչի վկայության, դրսի կողմից ամենն այնպես էր քանդված, որ աղյուսն ու հողը յոթ կանգուն ծածկել էին շենքը՝:

Էջմիածնի վանքի վերանորոգման ու ներքին կահավորման հետ կապված աշխատանքները սկսվում են Մովսես վարդապետի ժամանակ (1629—1632 թթ. կաթողիկոս), որի կատարածը նույն Ա. Դավրիժեցին որակում է «քրիստոսանկար»<sup>2</sup>: 1627 թ. Մովսես վարդապետը մասնակի վերանորոգումներ է կատարում վանքի շենքերում, հյուսիսային մասում վանքի միաբանների համար խուցեր է կառուցում, իսկ հարավային մասում՝ տնտեսատուն, սեղանատուն և այլն:

Փիլիպոս Ա Աղբակեցի կաթողիկոսի գահակալության տարիներից (1633—1655) սկսվում են Էջմիածնի վանքի և, մասնավորապես, Մայր տաճարի մեծածավալ վերանորոգումները, հավելյալ շենքերի կառուցումները, ինչպես նաև որոշակի հարկատվությունների կուտակումն ու պահպանումը: Փիլիպոս կաթողիկոսը վերանորոգում է ս. Հռիփսիմե և ս. Գայանե վանքերը, Երուսաղեմում կառուցում է Սրբոց Հակոբյանց վանքի ավագ սեղանը, հատակը ծածկում է խճանկարով և այլն: Նա գնում է Սպահան և մեծ ջանք գործադրելով Էջմիածին է վերադարձնում Գրիգոր Լուսավորչի աջը: Այն, մեկ ոսկետուփի, արծաթե խաչի և թանկարժեք ավետարանի հետ 1614 թ. Սպահան էր տարել Ծախ Աբաս Ա-ն<sup>3</sup>: Հակոբ Դ Ջուղայեցի կաթողիկոսը (1655—1680) ավարտեց զանգակատան կառուցումը (1658 թ.), վերանորոգեց այլ շենքեր: 1673 թ. Իրան գնալիս Էջմիածնով է անցնում ֆրանսիացի ճանապարհորդ Ծարդենը, որը գրում է, թե Տաճարում նկարներ ու քանդակներ չկային, սակայն հիանում է պատերի ծաղկազարդերով, նկարագրում խորանի երկու կողմերում գտնվող սենյակ-

<sup>1</sup> Պատմություն Առաքել վարդապետի Դարիժեցւոյ: Վաղարշապատ, 1884, էջ 233: Ռուս ճանապարհորդ-վաճառական Ֆեդոտ Կոտովը 1625 թ. այցելելով Էջմիածին, գրում է, որ «եկեղեցւոյ սրբապատկերներ չկան, միայն խաչ կա և սուրբ Աստվածամոր պատկերը»: Хожделение купца Федора Котова в Персию. М., 1968. стр. 56.

<sup>2</sup> Ա. Դավրիժեցի, նշվ. աշխ., էջ 235:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 151, 160—162, 244—247: Նոր Ջուղա էր տեղափոխվել նաև Էջմիածնի Մայր տաճարի չորս անկյուններից, Ավագ խորանից և Իջման տեղից համաձայն քարերը, որոնք մինչև այժմ պահպանվում են Խոջենց ժամ կոչված եկեղեցու զավթում:

ները՝ Սրբարանն ու Գանձարանը։ Սրանց խորքում նա տեսել է գեղեցիկ ու հարուստ խաչեր, ջահեր, մոմակալներ, ոսկե սկիհներ, արծաթյա մասնատուփեր<sup>4</sup>։

Եղիազար Ա Այնթապցի կաթողիկոսը (1681—1691) Իջման տեղի վրա քարե ամպրովանի է կառուցում, երեք աստիճաններով վեր է բարձրացնում Տաճարի ս. Ստեփանոսի և ս. Կարապետի խորանները։ Այնթապցի Ա Ջուղայեցի կաթողիկոսը (1706—1714) «Հարստացոյց բազմադիմի եղանակօք զսուրբ Աթոռս եկեղեցական զարդոյք»<sup>5</sup>։ Աստվածատուր Ա Համադանցի կաթողիկոսը (1715—1725) Իջման տեղի քարե կառույցը քանդում և կառուցում է նորը՝ մարմարից։ «...և ծաղկեցոյց ոսկով և պէս պէս երանգօք, և արար զարմանալիս տեսողաց... ծաղկեաց զբոլոր տաճարս ի միջոյ կողմանէ»<sup>6</sup>։ Այս մասին մի ընդարձակ արձանագրություն է մնացել Մայր տաճարի թմբուկի վրա. «Ի թուականութեան հայկական ՌՃԿԹ (1720) ես Տէր Աստուածատուր Համատանցի կաթողիկոս ամենայն Հայոց ետու նորոգել զչորեալին խախտեալ սինքն սրբոյ եկեղեցոյս, և զբոլոր եկեղեցիս նորոգեալ և ծաղկեալ համդերձ մարմարոնեալ շինուածովք որ ի մէջ սրբոյ եկեղեցոյս, են յիշատակ հոգոյ իմոյ, ի վայելումն տառապեալ ազգիս հայոց. ես աստ ի սուրբ Աթոռս գետեղեալ միաբանից, և որք ընթեռնութ զարձանս զայս, յիշեցէք զիս ի մաքրափայլ յաղօթս ձեր. և դուք յիշեալ լիշիք առաջի Քրիստոսի, ամեն»։

Կարապետ Բ Ուլնեցիս (1726—1729) «ետն ակարել զպատկերս երկուտասան Առաքելոցն ի ճակատ Առագ խորանին և ետ ծաղկել ոսկեգօծ և գեղեցիկ գունօք»<sup>7</sup>։ Արաբաճաճ Բ Խոջաբեցիս (1730—1734) «զարդարեաց ծաղկօք և մարգարեական պատկերովք. եւ զամենայն պատկերսն՝ որք գոն ի յորմունսն և սինան տաճարին՝ սա ետն ակարել»<sup>8</sup>։ Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսը (1763—1780) կառուցում է վանքի սեղանատունը, մոմատունը, դպրատունը, հիմնովին վերանորոգում է Տաճարը և այլն, և այլն։ Դուկաս կաթողիկոսի «Գալագանագրքի» այն հատվածում, որը հրատարակել է Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը, հետաքրքիր տողեր կան Սիմեոն կա-

թողիկոսի կատարածի մասին. «Այլ և զսուրբ տաճարն Աստուածակերտ և զտեղին Քրիստոսաւէջ զարդարեաց բազմազան յիշատակօք, ոսկեղինօք և արծաթեղինօք, մետաքսեղինօք և ընտիր զարդոյք հիանալի տեսողաց»<sup>9</sup>։

Էջմիածնի տաճարի վերանորոգումն ու ակարագարդումն իր ծաղկուն ժամանակներն է ապրում հատկապէս Դուկաս կաթողիկոսի օրոք։ Վերոհիշյալ «Գալագանագրքի» հատվածն ունի պատմական մաս, Դուկաս կաթողիկոսի վերանորոգությունների թվարկությունը, իսկ երրորդ մասը՝ «Յաղագս ծաղկացումանց եւ հիսհրաշ շքեղագարդութեանց եւ ակարակերտութեանց և զանազան պատկերագրութեանցն Քրիստոսահիմն մեծի տաճարին սրբոյ Էջմիածնի ի նոյնոյ վեհապետեն» խորագրով, նվիրված է տաճարի ակարագարդմանը<sup>10</sup>։

XVII—XVIII դդ. Էջմիածնի տաճարի ճոխության մասին հիացական տողեր են թողել ճանապարհորդներ Տեկտանդերը (1604 թ.), Տուրնեֆորը (1700 թ.)<sup>11</sup>, իսկ պատմագիր Հակոբ Ծամախեցին գրում է, որ Էջմիածնի Տաճարն այդ ժամանակ գեղեցիկ փայլ է ունեցել ոսկյա սրբանկարներից ու ծաղիկներից։

XIX դ. կաթողիկոսները նույնպես ձգտել են, որքան հնարավոր է, հարստացնել ու ճոխացնել վանքը։

Հատկապէս անհրաժեշտ է նշել Գևորգ Դ կաթողիկոսի (1866—1882) կատարածը։ 1869 թ. Տաճարի արևելյան կողմում նա թանգարանի սենյակներ է կառուցում և ի մի է բերում ձեռագրերն ու մյուս իրերը՝ այդ թվում նաև Կարապետ արքեպիսկոպոսին պատկանող 88 ձեռագրերն ու արժեքավոր իրերը։ Գևորգ Դ-ի կոնդակում կարդում ենք. «Բազումք բեկեալ էին և խեղաթիրեալք. և շատք սևացեալ, նոյնպէս բերեալք ի մի զառառաց՝ յոլովութեամբ ժամանակաց անցելոց... ոչ բարոք համարեցայ այնպիսի անվայել դրութեամբ գետեղիլ. այլ ընդ ձեռն ոսկերչաց ճարտարութեան յառաջին պատկեր շքեղութեան վերածել փոյթ կալայ՝ զբեկեալս և զխախտեալս նորոգելով և զպակասորդս ըստ կարի լրացուցանելով. և ամենեւին միանգամայն մաքրելով յաղտոյ և ի ժանկոյ»։ Այս ամենը նա տեղավորում է ապակեպատ

<sup>4</sup> Voyage du Chevalier Chardin... T. 2, Paris, 1811, p.172—173.

<sup>5</sup> Սիմեոն Երևանցի, Ջանքո։ Վաղարշապատ, 1897, էջ 27։

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 28։

<sup>7</sup> Ջանքո, էջ 28։

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 30։

<sup>9</sup> [Գարեգին Հովսեփյան]։ Յանդուած (Մայր Աթոռի դիմաց)։—«Արարատ», 1901, մարտ, էջ 184։

<sup>10</sup> Նույն տեղում, մայիս-հունիս, էջ 326—330։

<sup>11</sup> Какаш и Тектандер, Путешествие в Персию через Московию 1602—1603 гг. М., 1896, стр. 34.

պահարաններում և կոչ է անում նվիրատվություններով համալրել հավաքածուն՝ այն անվանելով «ազգագուտ» և «աստուածահաճող» գործ:

Խրիմյան Հայրիկի օրոք նոր թանգարան կառուցելու միտք է առաջանում, որը պետք է հիմնադրվեր Սիմոնի տեղում: Այդ նպատակով հրավիրվում է հնագետ-մարտարապետ Կ. Ե. Դոմբերգը, որը Ն. Մառի հետ մասնակցում էր Անիի պեղումներին: Կ. Դոմբերգը թանգարանը տեսնում էր որպես «հայկական հնությունների թանգարան» և մտադիր էր Անիի պեղումներից հայտնաբերված որոշ իրեր էջմիածին տեղափոխել<sup>12</sup>:

1900-ական թթ. որոշվում է վանքում առանձին պատկերասրահ կառուցել, որը պետք է երեք սրահ ունենար: I. Դասական գեղանկարչական ստեղծագործությունների վերատպությունների, էսուսմաների, վիմագրությունների սրահ: II. Ժամանակակից ուսուցողական նկարիչների գործերի սրահ, իսկ III սրահում պետք է ցուցադրվեին հայ նկարիչների ստեղծագործությունները, այդ թվում նաև եկեղեցական հին նկարներ: Պատկերասրահի կառուցման հարցերը որոշվում են հատուկ հանձնաժողովի նիստերում, որի մեջ ընդգրկված էին նկարիչներ Ե. Թադևոսյանը, Օ. Շմելովսկի, Բ. Ֆոգելը, Ի. Սկիֆաստյակին, Գ. Գրիմսկին:

Էջմիածնի վանքի մշակութային վերածնունդը հատկապես կապված է Վազգեն Ա կաթողիկոսի անվան հետ: Նա ոչ միայն վերանորոգեց ու նոր կառուցեց համալրեց վանքն ու նրան եկեղեցի մի շարք եկեղեցիները, այլև կարգավորեց արվեստի գործերի ցուցադրման հարցերը: Վերանոր-

ոգվեցին բազմաթիվ գեղարվեստական գործեր, և այդպիսով հնարավորություն ստեղծվեց արվեստի գործերի նորանոր մեծությունով առավել ճիշտացնելու Մայր տաճարի, Նոր և Հին Վեհարանների թանգարանները, ինչպես նաև նորակառույց Գանձատունը:

Մայր Տաճարի երեք սրահներում (1985 թ. դրանք վերանորոգվեցին) տեղադրվեցին հատուկ պատվիրված ցուցադրարաններ (ներկայացված է ավելի քան 888 ցուցանմուշ), կիրառական արվեստի ստեղծագործություններ, հնագիտական նյութեր, եկեղեցական իրեր և այլն:

1983 թ. Նոր Վեհարանի կողքին բացվեց Ալեք և Մարի Մանուկյան Գանձատունը: Այն իր մտահղացմամբ (ճարտ. Բ. Արզումանյան) համահնչուն է վանքի շենքերին և ունի թանգարանային ցուցադրության համար անհրաժեշտ լուսավորություն և ցուցադրարանների ընտիր տարածք:

Գանձատան ստեղծումը Վազգեն Ա կաթողիկոսի մշակութային մեծ նախաձեռնություններից մեկն է:

Էջմիածնի կիրառական արվեստի արժեքավոր հավաքածուն ձևավորվել է տարբեր ճանապարհներով<sup>13</sup>:

Անցյալում Էջմիածնի Մայր Աթոռին բազմաթիվ ստեղծագործություններ են նվիրաբերել վանք այցելողները: Նվիրաբերել են իրենց հանգուցյալ հարազատների հոգու խաղաղության համար: Այդ մասին երբեմն արձանագրություններ կան նվիրաբերած առարկաների վրա: Ավանդաբար, նվիրատվության այս ձևը շարունակվում է նաև մեր օրերում: Անհատներից զատ, իրենց հավաքած կոպեկներով, արվեստի արժեքներ են նվիրաբերել արհեստակցական առանձին ընկերություններ: Օրինակ, XVIII դ. վերջում փորորար են նվիրաբերել Կ. Պոլսի դրամափոխները: 1741 թ. վարագույր է նվիրաբերել պուգեմիների (տեղական ասեղնագործ ընտիր կտորների) ընկերությունը, 1847 թ. ընտիր սկիհ են նվիրել Կ. Պոլսի բեռնակիրները: Տեղեկություններ կան, որ Րաֆֆու կինը՝ Աննա Րաֆֆին, 1890-ական թթ. կեսերին Էջմիածին է բերել հնագիտական և ազգագրական նյութեր: Խրիմյան կաթողիկոսը Լոնդոնից հատուկ մասնագետ է հրավիրել Էջմիածնի վանքի իրերն արժեքավորելու նպատակով:

<sup>12</sup> Կ. Ե. Դոմբերգի 1894 թ. գրած նամակները Գ. Տեր-Մկրտչյանին: Երևան, Մատենադարան, Գ. Տեր-Մկրտչյանի ֆոնդ, թղթ. 24, վավ. 207, 208: 1870-ական թթ. սկսած տարբեր տեղերից Էջմիածնի թանգարանին ոչ միայն խոշոր գումարներ են տրամադրվում (Վ. Քանանյան, Դուկադան կտակը), այլև՝ հնագիտական, բնագիտական և այլ տեսակի նյութեր, հանքային հավաքածուներ, կենդանիների կմախքներ, հին դրամներ, գործվածքներ և այլն: Հատկապես նշանակալից է Կ. Եզյանի նվիրատվությունը. գրքեր, արվեստի գործեր, XVII դ. երկու ակամակալու մատանի և այլն: Ե. Լալայանը թանգարանին է նվիրել իր պեղումներից հայտնաբերած որոշ իրեր: Կ. Պոլսի Գյուլբենկյան առևտրական տան Իրանի ներկայացուցիչը, Էջմիածնի հիմնադրման 1600-ամյակի առթիվ, Մայր Աթոռին է նվիրում Մայր տաճարի պատկերով Խորասանում գործածված մի գորգ, որն այժմ էլ պահպանվում է Հին Վեհարանում (գործվ. № 272):

<sup>13</sup> Մատենադարան, Կ. Տեր-Մկրտչյանի ֆոնդ, թղթ. 100, վավ. 43: Պատկերասրահի կառուցմանը Ե. Թադևոսյանը մասնակից է դարձնում նաև իր ուսուցիչ, ուսուցանող նկարիչ Վ. Պոլեմովին:

Հավաքածուի հարստացմանը իրենց նվիրատվություններով մեծապես նպաստել են Ամենայն Հայոց կաթողիկոսներ Փրիլիպոս Ա Աղբակեցին, Միմեոն Ա Երևանցին, Ղուկաս Ա Կարնեցին, Հ. Արղությանը, Մակար Թ Թեղուտցին, Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցին, Մկրտիչ Խրիմյանը, Գարեգին Հովսեփյանը, Վազգեն Ա-ն, ինչպես նաև անվանի հոգևոր գործիչներ Ստ. Լեհացին, Առաքել Դավրիժեցին, Գաբրիել Այվազովսկին և այլք։ Անանուն վանեցի ժամանակագիրը (XVII դ.) նշում է, որ Նահապետ կաթողիկոսին մեծագին ընծաներ են ուղարկվել Աղթամարից<sup>14</sup>։

XVIII դ. վերջին տասնամյակներում կառուցված Աստրախանի եկեղեցիները կարճ ժամանակում մեծ հարստություններ կուտակեցին, որոնք ներմուծվում էին ոչ միայն Իրանից ու Հնդկաստանից, այլև եվրոպական երկրներից ու Ռուսաստանից («Առագ եկեղեցի Աստուածամոր... զարդարեալ ի ներքուստ ոսկեգոծ նկարիք, և արծաթապատ պատկերօք։ Իսկ ի կողմանէ զարդոց և անօթոց բոլորովին փարթամ»։ «Եկեղեցի սրբոյն Պողոսի և Պետրոսի է ամենափարթամ թէ հոյակապ գեղեցկութեամբ, թէ ոսկեղեն և արծաթեղեն զարդոք և թէ եկեղեցական թանկագին գգեստութեամբ»—կարդում ենք այդ եկեղեցիների ունեցած հարստությունների մասին<sup>15</sup>։ Հովսեփ Արղության կաթողիկոսի աճյունի հետ (մահացավ 1801 թ. Թիֆլիսում, Էջմիածին գալու ճանապարհին) Էջմիածին են բերվում նաև այն երեք արկղերը, որոնցում տեղադրված էին կաթողիկոսի նվիրատվությունները։ Դրանք թվում էին 18 հատ շոռֆե, ատրասե, զարբաք շուրջառներ, 7 հատ գույնզգույն հնդկական (դաջե) շապիկներ, արմալագործ հողաթափեր, թագեր, փորուրարներ, սփռոցներ, ծածկոցներ, գորգեր, արծնյա հավելումներով ոսկեգոծ սկիհներ, խաչեր, ոսկեհյուս և մարգարտահյուս գոտիներ, ձեռնաց խաչ «եաղուք և զմրուք ակնով» միջին կենաց փաշտ», պահարան «արծաթապատ յորում են ԺԲ մատուցք» և այլն։ Ընդամենը՝ 173 կտոր իր<sup>16</sup>։

Միմեոն կաթողիկոսը Իրանից բերել էր Աստվածամոր երկու սրբապատկերներ (մեկը՝ Ներսես Աշտարակեցին նվիրեց Ար-

բաս Միրզային)<sup>17</sup>։ Ներսես Աշտարակեցու կողմից Էջմիածին նվիրաբերված առաջին գործերից էր «Գահակալ աստվածամայրը» սրբապատկերը՝ զարդարված թանկարժեք քարերով<sup>18</sup>։ Գևորգ Դ կաթողիկոսն իր հետ զգալի հարստություն էր բերել Կ. Պոլսից և Նոր Նախիջևանից, Խրիմյան Հայրիկը՝ Վարագից, իսկ Վազգեն Ա կաթողիկոսը՝ Ռումիհիայից։

1697—1699 թթ. Խաչատուր վարդապետ Կարնեցու միջոցով Ինոկենտիոս պապը Նահապետ կաթողիկոսին է ուղարկում կաթողիկոսական գահ՝ ընտիր փաշտից, փորագրություններով (այժմ Մայր տաճարում է), ինչպես նաև «պատուական խալիչալ մի և ազնի գառազան, որք էին յոյժ մեծագին և անտես մարդկան»<sup>19</sup>։

Վերջին շրջանի նվիրատվությունների շարքում պետք է հատկապես նշել Բ. Արզումանյանի և Ժ. Չուլոյանի համատեղ աշխատանքի արդյունքը հանդիսացող թանկարժեք քարերով ընդելուզված ոսկեկտու «Հայկական այբուբենը» (1976 թ.), «Խաչը» (1979 թ.), և «Սուլեռական Հայաստանի գերբը» (1982 թ.) աշխատանքները, ինչպես նաև Գ. Խանջյանի նկարների հիման վրա Ֆրանսիայում գործված «Հայոց գիր» (1980 թ.) և «Վարդանանք» (1985 թ.) գրքեղենները։

Էջմիածնի վանքի հավաքածուն համալրվել է հայրապետներին կամ բարձրաստիճան հոգևորականներին նվեր տրված բազմաթիվ իրերով։

Զգալի է հայրապետական նվիրակների Էջմիածին բերած արժեքների դերը։ Հիշենք միայն մի քանիսը. 1761 թ. Կ. Պոլսում նվիրակ էր Միմեոն վարդապետը, 1770-ին Հնդկաստանում էր Հովսեփ վարդապետը, 1789—1791, 1798—1799 թթ. Հնդկաստանում էր Եփրեմ վարդապետը, 1799-ին՝ Հակոբոս արքեպիսկոպոսը, 1790-ական թթ. Նախիջևանի գավառում էր Տեղ Միմաս Աստվածաբան վարդապետը, 1817-ին Չինաստան էր գնացել Վրթանես վարդապետը, որոնց բերած արժեքները մեծապես հարստացրել են Մայր Աթոռի հավաքածուն։ Այն հարստացել է նաև այլ եկեղեցիներից Էջմիածին բերված իրերով։ Օրինակ՝ 1895 թ. Խաչիկ վարդապետ Դադյանը Իրանում գտնվող Մակվի (Արտազի գավառ) ս. Թադևոս և Թավրիզի Բերդա-

<sup>14</sup> Մանր ժամանակագրություններ։ Հ. I, կազմեց Վ. Ա. Հակոբյանը։ Եր., 1951, էջ 284։ Զգալի մասը պահպանվել է։

<sup>15</sup> Ս. Զալալեանց, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան։ Մասն Բ, 1853, Տիֆլիս, էջ 440։

<sup>16</sup> Երևան, Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 11, վավ. 77։ Ցուցակը կազմված է 1901 թ.։ Իրերի զգալի մասը պահպանվել է։

<sup>17</sup> (Мырзавен), նշվ. աշխ., էջ 186։ Նաև՝ Մատենադարան, ձեռ. № 9026։

<sup>18</sup> [Мырзавен], նշվ. աշխ., էջ 55։

<sup>19</sup> Անանուն վանեցի (XVIII դ.)։—Մանր ժամանակագրություններ։ Հ. I, էջ 359։

թաղի և Աստվածամոր եկեղեցիներից բավական թվով նկարներ, եկեղեցական սպասներ և զգեստներ է բերում Էջմիածին<sup>20</sup>։ Տարբեր ժամանակներում, տարբեր առիթներով կազմվել են հայկական եկեղեցիների ունեցվածքի ցուցակներ, ինչպես օրինակ՝ Թիֆլիսի Մուղանու և Գևորգ եկեղեցու (1792 թ.)<sup>21</sup>, Էջմիածնի և Գալանե վանքի (1772 թ.)<sup>22</sup>, Աշտարակի եկեղեցու (1794 թ.) և այլն, և այլն։ Այդ ցուցակներում հիշատակված որոշ իրեր այժմ գտնվում են հավաքածուի մեջ։ Երբեմն ցուցակագրվել են տարբեր եկեղեցիների գույքեր և հանձնվել Էջմիածնին, ինչպես՝ Ցամաքաբերդի, Օրթաքլվի, Ախթալայի եկեղեցիներից, Սևանի, Հաղպատի և Սանահնի վանքերից<sup>23</sup> բերված մի շարք իրեր։ Որոշ իրեր վանքին են տրվել Կարինի Սանասարյան վարժարանից Հայաստան բերված գույքից (նկարներ, դրամներ և այլն)<sup>24</sup>։ Վերջինս հետաքրքիր պատմություն ունի։ 1880 թ. Կարինում հիմնադրված Սանասարյան վարժարանի իրերը 100 սնդուկով 1912 թ. տեղափոխվում են Սեբաստիա, որտեղ դրանց զգալի մասը կորստի է մատնվում։ Փրկված մասը տեղափոխվում է Թիֆլիս, որտեղից Երևան բերված ձեռագրերը հանգրվանում են Մատենադարանում, նկարները՝ Պատկերասրահում, իսկ կիրառական արվեստի իրերը՝ Հայաստանի պատմության պետական թանգարանում և Էջմիածնի վանքում։

Թանգարանային արժեքների որոշ մասը Էջմիածին է հասել գաղթերի և կոտորածների ժամանակ, երբ հայ ժողովրդի փրկված զանգվածը ապաստան էր գտել վանքի հովանու տակ՝ անլուր գրկանքների զբնով իր հետ բերելով հայրենի մասունքները։

Էջմիածնի վանքի կիրառական արվեստի հավաքածուում զգալի տեղ են գրավում Մեծ եղեռնից փրկված Մուշի, Վարազի, Վանի և Լիմի վանքերին պատկանող արժեքների մնացորդները։

Այդ վանքերը հայ ժողովրդի սիրած վայրերից են եղել։ Այնտեղ ուխտավորներ են գնացել Հայաստանի բոլոր քաղաքներից ու գյուղերից՝ իրենց հետ տանելով նաև մեծարժեք նվերներ։ Ծակատագրի բերումով այդ ուխտատեղիները պարբերաբար

թալանվել են։ Վարազա վանքը մեծ վնասներ կրեց, երբ 1641 թ. Խոշարա բերդի տեր Սուլեյման բեկին հաջողվեց գտնել վանքի թաքստոցները և կողոպտեց դրանք՝ տանելով «զառագ սուրբ Նշանն»<sup>25</sup> բազում դաստառակօք պատեալ և ի մէջ գեղեցկաշէն արկեղ եղեալ... զայլ ևս անօթս, որ էին բազում արծաթեղենք, սկիհք, և խաչք, և խաչ մի մարդաչափ, որոյ կշիռն էր մէկ խոնդքարի լիտր, և ի վերայ իւր գրեալ ունէր, Դարթի խաչ և բազում ոսկետուփ և արծաթապատ անետարանք, և այլ գրեանք և արծաթեղենք, քշոցք և բուրվառք և կանթեղք, և պատուական և մեծագին շուրջառք, և վարագոյրք, և բեմի ծածկոցք, և այլ ևս կահք և կարասիք բազումք»<sup>26</sup>։ Ընդ որում, արծաթեղենը տանում էին, իսկ պղնձեղենը՝ ոչնչացնում։ Կարապետ վարդապետը իր առաջնորդության ժամանակ (1679—1697) Վարազա վանքին վերադարձնում է երբեմնի իր շքեղությունը։ Նա «զարդարեաց զսա մեծամեծ փառօք. միաբանիւ եւ ժամատեղօք, եւ փարթամացուցեալ ճոխացոյց ոսկեղինօք, եւ արծաթեղինօք. Աստուածաշունչ տառիւք եւ ամենայն եկեղեցական զարդիւք»։ Նույնն է անում նաև Ծուշանցի Բարդուղիմեոս վարդապետը։ «Զխաչկալս զխորանս եւ զկումբէթս վերստին զարդարեաց. եւ զսուրբ ուխտս միաբանիւք եւ եկեղեցական զարդիւք և սպասիւք...»<sup>27</sup>։ Վարազա վանքի արքայությունների մասին հետաքրքիր նկարագրություններ կան Բաֆթու «Վայծերի» երկրորդ հատորում։

1915 թ. նոյեմբերի 10-ին Վարազա վանք այցելողների առաջ զարհուրելի տեսարան է պարզվում։ «Վարազայ վանք գնացինք, ճիշտ Լիմ անապատի վիճակ ունէր. յատակները քանդուած ու կողոպտուած էր, բարեբաղտաբար գրադարանի վերածուած եկեղեցւոյն մէջ պահարան մը նկատի չիւնելով միանգամայն քանդողներու աչքէն վրիպած էր, ուր պահուած կային ձեռագիր և տպագիր մատենաներ և կարգ մը եկեղե-

<sup>24</sup> Հասնամյա տեղեկագիր Սանասարյան վարժարանի։ 1881—1901. Կ. Պոլիս, 1908, էջ 71—72։ Հնգամեայ տեղեկագիր Սանասարյան վարժարանի։ 1901—1906. Կ. Պոլիս, 1908, էջ 57—58։

<sup>25</sup> Սա այն սուրբ Նշանն է, որը մեծ հեղինակություն է ունեցել Հայաստանում։ Նրա պատվին բազմաթիվ եկեղեցիներ են կառուցել։ 1655 թ. ք. Նշանը վերադարձվեց Վան և դրվեց սր. Աստվածամոր եկեղեցում։ Նրա անվերադարձ կորուստը տեղի ունեցավ Մեծ եղեռնի ժամանակ։

<sup>26</sup> Ա. Դավրիժեցի, Աշլ. աշխ., էջ 388—389։

<sup>27</sup> Հ. Ոսկան, Վասպուրական-Վանի վանքերը։ Ա. մաս, 1947, Վիեննա, էջ 326—328։

<sup>20</sup> Խաչիկ վարդապետ Դատյանի Պարսկաստանից բերած հնությունները։— «Արարատ», 1895, է. էջ 266—270, Ը, էջ 318—316։

<sup>21</sup> Երևան, Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 8, վավ. 142։

<sup>22</sup> Նույն տեղում, թղթ. 4, վավ. 44։

<sup>23</sup> Նույն տեղում, Ամսիպ ձեռագրացուցակ, № 27։

ցական իրեր», իսկ մեկ այլ թաքստոցում կային «թանկարժեք անօթներ, թագեր, շուրջառներ, ծածկոցներ, խաչեր, սկիհներ, գաւազաններ», — գրում է ականատեք<sup>28</sup>:

Ժամանակակիցների հիացմունքն է առաջացրել Լիմ անապատի եկեղեցիների հարստությունը. «Խաչվառք խորանացն ոսկեգօծք եւ փառահեղք եւ ամենայն սպասք մաքուրք եւ վայելույք»<sup>29</sup>: Ըստ ավանդության, այստեղ էին պահպանվում նաև սբ. Գևորգի և Մահակ Պարթևի մատուցները<sup>30</sup>: Աղթամարի բազմաթիվ ասպատակություններից հատկապես զարհուրելի էր 1431-ինը, երբ Ամիր Փիրի բեկը գրավում է այն, իր հետ տանում «զսպասք և զգարդք երկնամամն տաճարին և զբոլոր ծովեզերեալս վանորայից և գեղորայիցս. զաստուածաշունչ մատենանքս և զայլ անասքք արքութեանցն»<sup>31</sup>: Կտուց անապատի մոտ 500 ձեռագրերից 320-ը Լիմի առաջնորդ Հովհաննես վարդապետ Հյուսանը բերում է Էջմիածին, իսկ «մնացած ամենաընտիր մասը, եկեղեցական բոլոր հնությունաց և արքութեանց հետ, մնաց և բաժին դարձաւ թիրքերուն...»<sup>32</sup>:

Նույն ողբերգությունները տեղի ունեցան Մուշում, Աշտնակոթի և Կարապետի վանքում:

Մշո և Կարապետի վանքը Տարոն գավառի խոշորագույն հոգևոր կենտրոններից էր: Այն գտնվում էր Մուշ քաղաքից 41 կմ հյուսիս-արևմուտք, Քարքե լեռան լանջին: Նրա աշխարհագրական դիրքն ու ընտիր ջրերով հարուստ աղբյուրները (Տրդատ թագավորի ավազանը, Լուսավորչի, Բարեհամ աղբյուրները) նրան տվել են նաև «Իմնակնյա» անունը: 352 թ. սկսած այս վանքում վանահայրեր և առաջնորդներ են եղել Ջենոբ Գյակը, Աբրահամ Մշեցին (հետագայում՝ 1730—1734 թթ. կաթողիկոս), Խրիմյան Հայրիկը և այլք: Մշո և Կարապետի վանքն ուներ միաբանություն, դպրոց, ձեռագրատուն, գրադարան, տպարան: Դպրոցի նոր շրջանի հետ է կապված հայագիտության երախտավոր Գարեգին եպս. Սրվանձտյանի անունը, իսկ տպարանի հետ՝ Խրիմյան Հայրիկը: Մշո և Կարապետի վանքն ուներ Մայր տաճար, գավիթ, զանգակատուն, սբ. Գևորգ և Ստեփանոս

տաճարները, հարակից շենքեր, սրբավայրեր և մատուռներ: Նշանակալից է ս. Կարապետի գերեզմանը: Առաքելոց կամ ս. Ղազարի վանքից է բերված 1134 թ. ընտիր փորագրություններով պատրաստված Աշտնակոթ դուռը (գտնվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում): Ավագ տաճարն ուներ 10 խորան: Ավագ խորանը ձևավորված էր թանկարժեք խաչերով, եկեղեցական ընտիր սպասքով, թալշյա մեծ վարագույրով: Գարեգին Սրվանձտյանը մտադիր էր գրել «զպատմություն Մշոյ և Կարապետի վանուցն իբր հարիր ամաց» գրել և տալ 'ի տիպ. ընդ որ ունիմ կցորդել գնոյն վանուցն Սրբոց Մատուցն մի առ մի, և ըզսրբոյ Յօհաննու վանուցն՝ սուրբ մասունս, զորոց ցանկն ունիմ առ իս բովանդակ»<sup>33</sup>: Ցավոք Գ. Սրվանձտյանի այդ իղձը չիրականացավ, և հայ մշակույթն ու պատմությունը զրկվեց մի կարևորագույն փաստաթղթից:

Գ. Սրվանձտյանը գրում է, որ ս. Կարապետի տաճարում են «զավազանք արծաթյա, բուրվառք, սուրբ մասունք, և ս. Ավետարանք. և խաչք արծաթազարդք ակնակուռ, հորս իբր անգին գանձ է Հեթում թագավորի ձեռամբ (գրյալ) հրաշագործ Ավետարանն», «Ի ս. Ստեփաննոս կր պահվին սկիհք, աղավմիք, խաչք և այլն արծաթյա անոթք, շուրջառք, վարագույրք, զգեստք, մանավանդ եպիսկոպոսականք՝ մարգարտահեղք»<sup>34</sup>: Մշո վանքի Մայր տաճարում կային սբ. Ստեփանոսի և Աստվածամոր մեծադիր պատկերները՝ արծաթյա շրջանակներով, իսկ յոթ մետր բարձրություն ունեցող խաչկալը պատրաստել էին Սարգիս և Նիկողայոս վանեցիները: Ավագ խորանում մոտ 1000 խաչ կար, Աստվածածնի խորանում մասունքով խաչերն էին, Տրդատի պողպատե զրահը և այլն: Ուխտավորները Մուշ էին գալիս հատկապես Վարդավառի և Վերափոխման տոներին<sup>35</sup>:

1915 թվին Մշո վանքը ավերակ դարձավ:

1916 թ. Գևորգ Ե կաթողիկոսը Մուշ է ուղարկում ութ հոգուց բաղկացած մի հանձնաժողով՝ «այնտեղ եղած վանքերի և եկեղեցիների մնացած գույքերին ու ստաց-

<sup>28</sup> Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակներ, № 82, թերթ 12ա:

<sup>29</sup> Հ. Ոսկեան, Աշխ. աշխ., էջ 49:

<sup>30</sup> «Բյուզանդիոն», Կ. Պոլիս, 1911, էջ 4368:

<sup>31</sup> Ե. Լալայան, Ցուցակ հայերեն ձեռագրաց վասպուրականի: Թիֆլիս, 1915, էջ 812:

<sup>32</sup> Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակներ, № 82, թերթ 9ա:

<sup>33</sup> Գ. Սրվանձտեան, Հնոց եւ նորոց: Կ. Պոլիս, 1874, էջ 18—19:

<sup>34</sup> Գարեգին Սրվանձտյան, Տեղագրություն և Կարապետի վանուցս 'ի Մուշ, Երկեր: Հ. 2, Եր., 1982, էջ 472:

<sup>35</sup> Հ. Ոսկեան, Տարոն-Տուրքերանի վանքերը: Վիեննա, 1953:

ուածներին հսկելու և տէրութիւն անելու»<sup>36</sup> պատրվակով: Հանձնախումբը Մուշ է մեկնում մարտի 30-ին և վերադառնում մայիսի 27-ին: Պարզվում է, որ թալանվել են Մշո առաջնորդարանը, մասնավոր մարդկանց տներում պահ տրված եկեղեցական իրերը, Առաքելոց վանքի ոսկե և արծաթե անոթները, երկու հատ թագ, հինգ թոց, երկու բուրվառ, 125 շորջառ, Ղիճի ավետարանի կազմը և մի քանի խաչ՝ Ջոշիկյանի և Գասպարյանի տներից, նույն եկեղեցու սրբազան անոթները՝ Կարապետ Թութունջյանի և Նահապետ Հակոբյանի տներից, մյուս իրերը՝ Արշակ Իգիթյանի և Նահապետ Հակոբյանի տներից: Մշո եկեղեցիներն ու տներն ավերված էին, բնակչությունը՝ բնաջնջված: Կողոպուտից զերծ էր մնացել միայն ս. Կարապետ վանքի ամենակարևոր գաղտնարանը, որտեղ գրուներվող իրերի ցուցակը պահպանվել էր փայտե փոքր սնդուկում: Ըստ այդ ցուցակի, իրերը փրկվեցին. 754 անուն 61 տեսակի ստեղծագործություն<sup>37</sup>: 1902 թ. կազմված ս. Կարապետի վանքի ունեցվածքի ցուցակում միայն մետաղյա իրերի թիվը 986 է, գործվածքների՝ 433, արծաթյա պատկերների՝ 47, 28 հատ գեղանկարչական աշխատանք կար<sup>38</sup>: Փրկված բոլոր իրերը բերվում են Էջմիածին: Վասպուրականի և Տարոնի վանքերի արժեքները փրկելու ուղղությամբ մեծ գործ են կատարել գիտնականներ Ն. Մառը, Հ. Օրբելին, Ե. Լալայանը, Ա. Տեր-Ավետիսյանը և այլք: Սրանց ջանքերով Էջմիածին և Երևան են բերվել բազմաթիվ արժեքներ, այդ թվում նաև Մշո Առաքելոց վանքի վերոհիշյալ փայտե դուռը:

Փշրանքներ են փրկվում և Էջմիածին տեղափոխվում Վասպուրականի վանքերի հարստություններից, այդ թվում ս. Սահակ վանքից՝ Սահակ Պարթևի աջը: Կտուց

անապատի ս. Կարապետի վանքի մեծագույն հարստությունից փրկվում է միայն 320 ձեռագիր, իսկ հնությունները «բաժին եղան թուրքերուն»<sup>39</sup>:

Գարեգին Սրվանձտյանը գտնում էր, որ «Վանորայք և եկեղեցիք Հայաստան աշխարհին մերոյ են մէն մի գանձարանք պահարանք ազգային հնութեանց, բերասել են ազգային գոյութեանց»<sup>40</sup>:

Վաղուց արդեն ամայի են պատմական Հայաստանի բազմաթիվ վանքերն ու եկեղեցիները: Վաղուց արդեն այնտեղ չկան հոգևոր հարստություններ ստեղծող, նվիրաբերող կամ պահպանող մարդիկ, սակայն ապրում և արվեստի բարձր իմաստավորմամբ հիացմունք են պատճառում անհայտ վարպետների ստեղծագործական մտքի արդյունք հանդիսացող այդ բարձրարվեստ արժեքները:

Էջմիածնի հարստությունները նույնպես մի շարք փորձություններ են կրել:

Մի քանի օրինակ.

Աղա Մահմեդ խանի արշավանքներից (1795) սարսափած՝ Ղուկաս կաթողիկոսը վանքի հարստությունները չորս մասի է բաժանում, երկուսն ուղարկում է ի պահ Կարսի և Բայազետի փաշաներին, մեկը՝ Թիֆլիս, իսկ չորրորդ մասը պահում է Էջմիածնում: Ծակատագրի բերումով փրկվում է միայն Էջմիածնում պահվածը, քանի որ պարսիկներն Էջմիածին չեն մտնում, սակայն ավերում են Թիֆլիսը<sup>41</sup>: Բնակա-

<sup>39</sup> Հովհ. վարդապետ Հյուսան, Համառոտ մկարագրություն Վասպուրականի մեջ եղած մի քանի նշանավոր վանքերու, որոնք մինչև 1915 թուակ. շին և միաբանական վանքեր էին... Նույն տեղում, № 92, 18 թերթ:

<sup>40</sup> Գ. Սրվանձտեան, Հնոց եւ նորոց. էջ 3:

<sup>41</sup> (Муравьев), Грузия и Армения. ч. II, СПб, стр. 189. Այդ արշավանքից հատկապես տուժեց Թիֆլիսի Մուղան վանքը, որը «զրկեալ ի կահուց և ի կարասեաց»: Երևան, Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 6, վավ. 69, 1796 թ.: Մուղան սր. Գևորգ վանքի նորընտիր առաջնորդ Կարապետ վարդապետ Արապկիրցին կազմում է վանքի ունեցվածքի ցուցակը, որտեղ գրանցված են մեծարժեք իրեր, այդ թվում. «ս հատ արծաթեայ պատկեր Աստուածածնի», «ս պատկեր Յովհաննու ատետարանիչին ի վրա տախտակի», «սեղանի մեծ վարագոյր այլազան պատկերօք», «ս մեծ արծաթեայ պահարան Ե խաչով, որում գոյ արքայն Գեորգայ զազաթն» և այլն: Նույն տեղում, վավ. 142:

Ամհրածեշտ ենք համարում հիշատակել, որ Թիֆլիսի Մուղան ս. Գևորգ վանքի նույնանուն եկեղեցին փոքր էր, իսկ ս. Աստվածածնի անունը կրողը՝ մեծ: Այն կառուցվել է 1856—1858 թթ., հետագայում բազմիցս վերանորոգվել: Ըստ ավանդության,

<sup>36</sup> Զեկուցում Մուշ ուղարկված հանձնաժողովի:— «Արարատ», 1916, է—Ը, էջ 567:

<sup>37</sup> Ցուցակ Մուշի ս. Կարապետ վանքից բերված և Մայր տաճարի խորանում պահ տրված եկեղեցական սպասների և իրերենների: Նույն տեղում, էջ 585—586:

<sup>38</sup> «Ցուցակ եկեղեցական գոյից և սրբազան անօթից և սրբոց հրաշագործ մասանց, որք են ի վանքն սրբոյն Յովհաննու Կարապետի Տարօնայ. յանձնեալ խնամոց և զգոյշ աւանդապահութեան նորընտիր լուսարար Կարապետ վարդապետի յետ վախճանելոյն նախկին լուսարար Տեր Թադէոս վարդապետի Խաչատուրեան ի 1902 ամի փրկչական թուոյն»: Երևան, Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակ, № 51: Գրանցումները 80 էջ են զբաղեցնում:

նաբար, ետ չեն գալիս նաև Կարս և Բալագետ ուղարկվածները: 1805 թ. հոկտեմբերի 23-ին Թիֆլիսից Հովհաննես արքեպիսկոպոսի գրած նամակից իմանում ենք, որ, «սակի քան 10 բեռն եկեղեցական և միաբանիցն պիտանոց իրք, որք կան 'ի Պալագետ», բոլորը ետ չի տվել: Նա իր որդիների հետ մահացել է, հարստությունն անցել է եղբորը, որը նույնպես հրաժարվել է այն վերադարձնել:

Մեկ այլ դեպք: 1802 թ. Դավիթ կաթողիկոսը սիսեռի պարկի մեջ դրված արկղով Երևան է ուղարկում ս. Գեղարդը, Կենաց փայտի ս. Նշանը, խաչեր, բուրվառներ, սկիհներ, թանկարժեք քարեր ու մարգարիտներ, որոնք ժողովրդի կողմից բռնագրավվում են, բերվում Երևանի ճարտարապետի տունը և ցուցակագրվում<sup>42</sup>:

Երրորդ դեպքը. Սարատովյան գնդի զբնդապետ-մայոր Նեպլեստևը Թիֆլիս է ուղարկում 13 արկղ վանքապատկան գույք (825 իր), որոնց թվում՝ ոսկեթել ու արծաթեթել գորգեր, շուրջառներ, թանկարժեք քարերով ընդելուզված թագեր, բուրվառներ, սկիհներ, ինչպես նաև ս. Գեղարդը ու Գրիգոր Լուսավորչի աջը, ավելի քան 5 փութ քաշ ունեցող այլ արծաթյա

իրեր<sup>43</sup>: Բազմաթիվ միջնորդագրերից հետո, Պետերբուրգից եկած հատուկ կարգադրությամբ միայն, գույքի մի մասը վերադարձվում է Եփրեմ կաթողիկոսին<sup>44</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով Կովկասում ստեղծված իրադրության պատճառով, 1915 թ. վանքի ողջ ունեցվածքը ցուցակագրվում է, դրվում 37 արկղի մեջ և առաքվում Մոսկվա<sup>45</sup>: «Խորհրդային Հայաստան» թերթի 1922 թ. մայիսի 13-ի համարում տպագրված է հայտարարություն այն մասին, որ համաշխարհային պատերազմի ժամանակ Մոսկվա տարված Էջմիածնի գրադարանի գույքը տեղափոխվում է Երևան: 1926 թ. օգոստոսի 7-ին նույն 37 արկղերը գալիս են Մոսկվայից և սովետական կառավարության կողմից պաշտոնապես վերադարձվում Էջմիածնի վանքին<sup>46</sup>:

Հետաքրքիր պատմություն ունի նաև Էջմիածնի վանքի հավաքածուի գրառումն ու միջավառումը:

Սիմեոն կաթողիկոսի օրոք այնքան շեն է եղել վանքը և, հատկապես, Տաճարը, որ Հայրապետը կազմել է երկու օրինակից քաղկացած իրերի մի ցուցակ՝ ընտիր գրով գրված: Դրանք պահպանվում են այժմ Էջմիածնի վանքի ձեռագրատանը: Ահա այդ ցուցակի վերնագիրը. «Դավթար և հաշուագիր անօթից և սպասուց սուրբ և միաճանիչի Տաճարիս. թե ոսկեղինաց՝ թե արծաթեղինաց՝ թե պղնձեղինաց. թե Ծորեղինաց. և թե այլ միջեղինաց: Որ 'ի ՌՄԺԷ (1768 թ.) թուոջ մեղում. հրամանա Տերն Սիմեոնի սրբազան կաթողիկոսին՝ և ձեռամբ նորին սպասաւոր Մկրտիչ. և գրագիրն Երեմիա. և լուսարար Գրիգոր վարդապետացն՝ գրեցաւ երկու օրինակ 'ի ձեռն միոյ գրողի: Զորս սրբազան կնքեալ՝ գնինն ետ լուսարարին՝ զի առ նա մնացել, և գմիսն 'ի վեարանոցն եղ ի պահեստի: Զի ըստ ժամանակի յորժամ գիտել կամիցի ոք զհաշիւ սպասուց սրբոյն Տաճարիս, համաձայնութեամբ երկուց դաւթարացս գիտացել»<sup>47</sup>:

ս. Գեղարդի գագաթի մասունքը բերվել է Հայաստանից, դրվել երկփեղկանի մասանց պահապանի մեջ, որը հետևյալ արձանագրությունն է ունեցել. «Յիշատակ է Յովսէփին և ծնողացն Գորգուն, Խանկերվանին, և կողակցոյն Եանգուրին և որդւոցն ամենեցուն, ի դուռն Մողմոյ սուրբ Գեղարդայ ի քահանայութեան մերոյ տէր Ծմստոնին, թվին ՌԺԿԹ» (1721): Երկրորդ արծաթյա պահապանում երեք խաչ կար. մեկի մեջ Կենաց փայտի մասն էր, իսկ մյուսների մեջ՝ մասունքներ ս. Հակոբից, Լուսկիանոսից, Թեոդորոս ճգնավորից, Քրիստոսի գերեզմանի քարից, ս. Կարապետի վանքից, Անտոն ճգնավորի այրի քարից և Պանտելեյմոն բժշկից: Սրանցից մեկի արձանագրությունն էր. «Մահտեսի տէր Աբրահամ Արամելիքեանց ընծայեցի զայս արծաթեայ պատկերս եռախաչ սուրբ մասամբք զիս յիշատակ ի դուռն Մողմի եկեղեցին Թիֆլիզոյ վասն իմ հոգւոյ և մարմնոյ ցօր վախճանի իմոյ»: 1797 թ. հունվարին, Հովսեփ Արղությանը հատուկ ժողով է հրավիրում և դիմում է ժողովրդի օգնությանը, որպեսզի Մուղմու եկեղեցուն նվիրատվություն անեն: Նվիրում են ոռոսական սրբապատկերներով խաչկալ, զգեստներ և՛ այլն: Ա. Երիցեան, Հարիւր տարուայ համախօսական վճիռ Թիֆլիսի Մողմու եկեղեցոյ:— «Արձագանք», Թիֆլիս, 1897, № 11:

<sup>42</sup> Երևան, Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 12, վավ. 8, 14: Դիվան հայոց պատմության: Գիրք Ա, 1893, էջ 144—148:

<sup>43</sup> Նույն տեղում, թղթ. 16, վավ. 58, 56, 65, 67, 182, 183:

<sup>44</sup> Նույն տեղում, թղթ. 21, վավ. 58, 118: 1805 թ. մայիսի 5-ին, Վրաստանի կրոնական ավագանին ու այլ պաշտոնյաներ, Հովհաննես արքեպիսկոպոսի գլխավորությամբ, գնում համբուրում են սբ. Գեղարդը, ս. Թադևոս առաքյալի աջը, ապա դրանք բերում և տեղադրում են Մուղմու ս. Աստվածածնի եկեղեցում: Նույն տեղում, թղթ. 16, վավ. 128:

<sup>45</sup> Մատենադարան, Կաթողիկոսական դիվան:

<sup>46</sup> Նույն տեղում, № 29:

<sup>47</sup> Մայր Աթոռի ձեռագրատուն, № № 124, 125:

Ըստ Սիմեոն կաթողիկոսի ցուցակի, որը բաղկացած է 172 էջից՝ ստեղծագործությունների որոշակի խմբավորումներով, վանքում եղել են մասունքի 67 պահարան, արծաթյա 9 սրբանկար, 186 հատ գեղանկարչական մեծ ու փոքր աշխատանքներ և այլն։ Գարեգին կաթողիկոս Հովսեփյանը հրատարակել է «Դաթարի» միայն մեկ հատվածը՝ ընդգրկելով տաճարի 88 գեղանկարչական մեծ աշխատանքները<sup>48</sup>։

Էջմիածնի վանքի հարստությունների հաջորդ ցուցակագրողը Էջմիածնի միաբան եպիսկոպոս Հովհաննես Ծախաթունյանն է եղել, որը 1834—1835 թթ. նկարագրել է վանքի կարևոր կառույցներն ու ունեցվածքը, արտագրել դրանց արձանագրությունները, 1837 թ. կազմել է ձեռագրացուցակ և հրատարակել 1842 թ.<sup>49</sup>։ Նա նշում է. «քանիցս անգամ 'ի ժամանակս պատերազմաց 'ի դաշտի աստ Արարատայ, 'ի կորուստ գնացին 'ի'նչ 'ի'նչ հարկատու մատենաք' թե' 'ի գրանդե աստի, և թե' յառանձին զգուշատու պահպանութեանցն այնց 'ի զանազան զապահով կարծեալ տեղիս»<sup>50</sup>։

Հ. Ծախաթունյանի գրքում մի ամբողջական հատված է նվիրված Տաճարի նրկարներին (նաև Խաչկալին), իսկ կիրառական արվեստի գործերից ընդգրկված է 42 աշխատանք՝ կաթողիկոսական երկու գահերը, գաղտնիկունե երկու դռները, ս. Գեղարքը, Հավուց Թառի Ամենափրկիչը, Քրիստոսի խաչափայտի մասունքը, Խոտակերաց սուրբ Նշանը, Նոյան տապանի մասունքի տուփը, Արագածի սբ. Նշանը, աջեր (Գրիգոր Լուսավորչի, Հակոբ Մծբնա հայրապետի, Թադևոս և Թովմա առաքյալների, Մաթեոս ավետարանիչի, Արիստակես հայրապետի և այլն), ինչպես նաև տապանակներ ու խաչեր։ Հեղինակը տալիս է յուրաքանչյուր իրի սեղմ նկարագրությունը, շարադրում նրա հետ կապված պատմությունները, վերարտադրում արձանագրությունները։ Կարևոր մի առանձնահատկությունն է. Ծախաթունյանն իր նկարագրությունները կատարում է ոչ միայն եղևնով տվյալ իրի պատմական կամ եկեղեցական նշանակությունից, որն անշուշտ առաջնային էր նրա համար, այլև՝ մասնա-

կիրեն վեր հանելով դրանց գեղարվեստական կողմը։ Նա իր գրքի այդ բաժինն հենց աղյուս էլ անվանել է.<sup>51</sup> «Ինչ ինչ գործք և նկարք ճարտար արհեստարարաց նուիրեալք յոմանց յանուն սրբութեան Տաճարիս՝ յորում և տանին», իսկ կիրառական արվեստի իրերն առանձնացնում և վերնագրում է. «Յաղագս սուրբ Մասանց, և Նշխարաց Սրբոց եղևոց աստէն 'ի զանձարանի սրբոյ խորանի մեծի Կաթողիկէ եկեղեցոյս»<sup>52</sup>։

Հաջորդ ցուցակագրումը կատարել է Գեվորգ Դ կաթողիկոսը։ Հիմնադրելով վանքի թանգարանը և ցուցակագրության դնելով հնությունները՝ կաթողիկոսը գրանցել է տալիս բոլոր իրերը և համարակալում<sup>53</sup>։

Պահպանվել է Գևորգ Դ-ի կազմած իրերի մատյանը (1869—1879 թթ.), որտեղ, որպես առաջաբան-բացատրություն, գրանցված է կաթողիկոսի կոնդակը։ Պարզվում է, որ իրերը ոչ միայն գրանցվել են, այլև յուրաքանչյուրի վրա կապել են «ըզտպագիր թուանշանս»։ Դրանցից մի քանիսը պահպանվել են որոշ իրերի վրա։ Ըստ այդ ցուցակի, իրերը բաժանված են 67 խմբի՝ ընդգրկելով 511 առարկա<sup>54</sup>։

Հետագայում ևս մի շարք անգամներ վանքի հարստությունները ցուցակագրելու փորձեր են արվել։ Սակայն վերջնական ցուցակագրումն ու համարակալումը կատարվել է 1982—1986 թթ., որի ժամանակ ոչ միայն համարակալվել են վանքի բոլոր շենքերում պահպանվող գեղանկարչական ու կիրառական արվեստի ստեղծագործությունները, այլև լրացվել են թանգարանային հատուկ քարտեր (անվանում, կատարման ժամանակը, վայրը, նյութը, չափը, քաշը, տեխնիկան, վիճակը, արձանագրությունը, նկարագրությունը), որոնց վրա ամ-

<sup>51</sup> Հ. Ծախաթունյան, Նշվ. աշխ., էջ 41—45։

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 47—76։ Հետագայում այդ աշխատության վրա հեղմելով Էջմիածնի վանքի կարևորագույն արժեքների մասին մի աշխատանք հրատարակեց Սահակ վարդապետ Աստվածատուրյանը. Պատկերացոց մասնատու հնութեանց Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի եւ շրջակայից։ Պրակ. Ա, վաղարշապատ, 1910, պրակ Ե, Երուսաղեմ, 1918։

<sup>53</sup> Թվում է, որ առաջին համարակալումը կատարել է Հ. Ծախաթունյանը, քանի որ որոշ իրերի վրա պահպանվել են շատ հին թիթեղյա փոքր համարներ, որոնք մետաղյա լարով կապված են իրին։ Դրանք կարող են նաև Սիմեոն կաթողիկոսի ժամանակներից լինել։ Ինչպես այս մետաղյա, նույնպես և Գևորգ Դ-ի թղթե համարները, որոնք նույնպես շատ քիչ են, մոր ցուցակագրման ժամանակ պահպանվել ենք։

<sup>54</sup> Մայր Աթոռի ձեռագրատուն։

<sup>48</sup> Գարեգին Ա. կաթողիկոս, Նիսիեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան։ Պրակ Ե։ Ամթղիսա-Լիբանան, 1851։ Ցուկում Ա, էջ 45—47։

<sup>49</sup> Հ. Ծախաթունյան, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ։ Հ. առաջին, Էջմիածին, 1842։

<sup>50</sup> Նույն տեղում, էջ 60։

րացվել են նաև իրերի լուսանկարները: Այդ քարտերի հիման վրա կազմվել է Մայր մատյան: Էջմիածնի վանքի բոլոր ստեղծագործություններն այժմ ունեն ընդհանուր և հաջորդական համարակալումներ ըստ տեսակի՝ մետաղ, գործվածք, փայտ, խեցի, ապակի, գեղանկարչություն, գրաֆիկա և այլն: Ցուցակագրման և քարտավորման շնորհիվ հավաքածուն ստացավ գիտական հաշվառման այնպիսի մակարդակ, որը բնորոշ է խոշոր թանգարաններին: Դա ոչ միայն հեշտացնում է իրերի պահպանումը, այլև կալում հիմք հանդիսանում հետագա գիտական ուսումնասիրությունների համար:

Էջմիածնի վանքի հավաքածուի շատ քիչ մասն է ուսումնասիրվել: Գիտնականները հիմնականում հետաքրքրվել են պատմական կամ գեղարվեստական բարձր արժեք ունեցող մի քանի նկարներով և կիրառական արվեստի ստեղծագործություններով, ինչպես՝ դրամներ, Խոտակերպաց ա. Նշանը, Գոհգոր Լուսավորչի խաչվառը, Հավուց Թառի Ամենափրկիչը, Ավագ խորանի մեծ վարագույրը, Փիլիպոս կաթողիկոսի արծվագորգը, դաջե վարագույրները, գեղանկարչական որոշ աշխատանքներ կամ ավետարանների եզակի կազմեր: «Էջմիածնի գանձեր» և «Գանձատուն» շքեղ պեղումների հրատարակությունների շնորհիվ (1984 թ., Ֆիզկանդիա), շրջանառության մեջ դրվեցին հարյուրավոր ստեղծագործությունների վերատպություններ: Նոր ցուցակագրումը երևան բերեց գիտական նշանակություն ունեցող կարևոր փաստեր (որոշ իրերի շատ ավելի հին ծագում և այլն):

Ո՞րն է Էջմիածնի վանքի հավաքածուի պատմա-գեղարվեստական արժեքը:

Հնագույն ժամանակներից աշխարհագրական լայն տարածք է ունեցել հայկական արվեստը: Կիրառական արվեստի զարգացումը կապված է եղել հայաբնակ բոլոր քաղաքների, ավանների ու գյուղերի հետ: Գոյատևման պայքարի պայմաններում արհեստները միշտ առաջնակարգ տեղ են գրավել հայի կյանքում: Պատերազմները, գաղթերը, պետականության անկումները կասեցրել են արհեստների ու արվեստների զարգացումը: Սակայն, կարճ դադարից հետո, նոր պայմաններում, շատ հաճախ և նոր վայրերում, հայ արհեստավորներն ու արվեստագետները շարունակել են ազգային արվեստի սկզբունքների վրա խարսխված գեղարվեստական իրերի արտադրանքը՝ դրանց տալով նոր որակ և նոր ձևավորում:

Տարբեր ժամանակներում արհեստավորական խոշոր կենտրոններ են եղել Ար-

տաշատը, Դվինը, Անին, Տիգրանակերտը, Վաղարշապատը, Վանը, Կարինը, Երզնկան, Մեքաստիան, Կեսարիան, Թոքատը, Մարաշը, Այնթապը, Էդիրնեն (Ադրիանուպոլիս), Կ. Պոլիսը, Մադրասը, Ջմյուռնիան, Նոր Ջուղան, Երևանը, Ծուշին, Թիֆլիսը և շատ ու շատ հայկական, ինչպես նաև հայաբնակ քաղաքներ: Հայ արհեստավորների գործերը առևտրական ճանապարհներով մուտք էին գործում եվրոպական ու արևելյան շուկաները, դառնում պալատների զարդ, հարստության չափանիշ:

Էջմիածնի վանքի կիրառական արվեստի իրերի և գեղանկարչական ստեղծագործությունների արձանագրությունների ուսումնասիրությունը հնարավոր է դարձնում վեր հանել մի քանի կարևոր առանձնահատկություններ. առաջինը հայկական եկեղեցիների աշխարհագրական մեծ տարածքն է, եկեղեցիներ, որոնց նվիրաբերվել են այդ իրերը. Կ. Պոլիս, Երուսաղեմ, Տրապիզոն, Ջմյուռնիա, Թոքատ, Վան, Ալև, Մուշ, Լիմ, Էդիրնե, Քյոթահիա, Ամրդոյու, Ադանա, Կարին, Արաբկիր, Արդվին, Դարաշամբ, Աստրախան, Ծուշի, Լըզար, Լրիմ, Քիշնև, Գանձակ, Ախալցխե, Թիֆլիս, Կրծանիս, Բուլնիս, Նոր Ջուղա, Թեհրան, Թավրիզ, Կալկասա, Մադրաս, Երևան, Քանաքեռ, Ալեքսանդրապոլ, Նոր Նախիջևան, Ագուլիս, Ծոռոթ և այլն: Փաստորեն այս հոգևոր կենտրոնները դարձել են նաև նյութական մշակույթի պահպանման օջախներ:

Երկրորդ առանձնահատկությունն այն է, որ արձանագրությունների բովանդակությունները լոկ նվիրատվական նշանակություն չունեն: Դրանք միաժամանակ ժողովրդի կյանքի պատմությունն արտացոլող վկայություններ են: Իրերը նվիրաբերվում են, կոտրվում են, վերանորոգվում են այլ մարդկանց կողմից և այլ վայրերում, երբեմն գերի են տարվում, վերադարձվում, վերանվիրվում և այլն:

Կա մի երրորդ առանձնահատկություն ևս. Էջմիածնի վանքի հարստությունների շնորհիվ հնարավոր է խորապես ուսումնասիրել հայ մշակույթի զարգացման բնույթը, զատորոշել դպրոցները, վերլուծել դրոնաց գեղարվեստա-գեղագիտական բնորոշ գծերը: Չճանաչած այն հանգամանքին, որ հայկական կիրառական արվեստի բարձրարվեստ ստեղծագործություններ պահպանվում են ինչպես աշխարհի խոշորագույն թանգարաններում, մուլնպես և Երեվանի պետական թանգարաններում, այնուամենայնիվ, Էջմիածնի հավաքածուն այնքան բազմակողմանի է և տարողունակ, որ

հենց միայն այդ օրինակների հիման վրա հնարավոր է հաղափարա-գեղարվեստական մեծ ընդհանրացումներ անել:

Էջմիածնի վանքի կիրառական արվեստի ստեղծագործությունները հիմնականում կրոնա-ծիսական բնույթի են, սակայն դա չի խանգարում ընդհանրացումներ անելու, բանի որ դրանց գեղարվեստական ընտիր

ձևավորումները թելադրված են ինչպես իրի հաղափարա-գործնական նշանակությամբ, նույնպես և ժողովրդական վարպետների ազգային, ազգագրական և գեղագիտական ինքնաբերական ընկալումներով:

(Ծարունակելի)